

4.

Եղբերեղբուին սիրտ թալկացաւ, ոչ պահեաց ժոյժ,
 Եկանատես զոյ արկածիցն անդ մահագոյժ,
 Օջի ձիչ մանկանց, և գոռմունք մարց, հարցն աղաղակ,
 Ի մի զուգեալ ի բռան անդ, (ժամ դժնդանի):
 Ի զող արկին զսարուձոր: Օջի զօրաց սուր՝
 Մղէր ի գետ զչայկաղնեսայս ճարակտուր,
 Սասն այն անձին ետ քաջայեր լինել անահ,
 Եւ յԱրատիսին ի ջուր սուղեալ առնուլ զմահ:
 Ինձ մեռանիլ, ասաց շահ է յալիս գետոյն,
 Որոյ ահունք բղխեն վճիտ՝ ի սուրբ հօղոյն,
 Քան անցանիլ ի հող օտար, հող դառնութեան,
 Աւր թշնամին ոտնհար լեցի յիմ գերեզման:
 Եսաց եկաց, և անդաձէր, մի՛ անձնասպան
 Լինել կամաւ, այլ անցանիլ ընդ յորդ ջուրն այն,
 Եդ ի մտի, զնալ ի լող, և սրացաւ,
 Եւ ի թափոյն յաղթահարեալ՝ անդ թաղեցաւ:

Ի Նոր-Ջուղայ:

6.

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

ՆՈՒԵՐԲ ԵՒ ՈՒՆՏ

ԳԼՈՐԳ ԵՐՔԵՊԻՍՈՎՈՍԻ ՎԵՆՊԵՏԵՆՆԻ

Աստրախանայ Վիճակին Առաջնորդ Գեր. Գէորգ Արքեպիսկոպոս Վեհապետեան՝ ի պէտս Մայր Տաճարի Ս. Էջմիածնի՝ քսան հատ ժամաշապիկ, եւ ի նպաստ ձեմարանի հինգ հարէ-ը ուրբլի նուիրեց՝ եւս ուխտիւք խոստացաւ յառաջակայ 1876 թուականէն սկսեալ իւրաքանչիւր տարի մի որդեգրի համար երէտ հարէ-ըական ուրբլի նպաստել, եւ այս առթիւ հետեւեալ յայտարարութիւնը մատոյց առ Վեհ. Հայրապետ, զոր արժան կհամարուիք հրատարակել:

«Քաղցր է ինձ արդարեւ, հանապաղ առաջի աչաց ունել զսեպուհ պարտաւորութիւն հոգեկան որդիութեան իմոյ առ շնորհածաւալ Մայր Աթոռն Կաթողիկէ Եկեղեցի, որոյ շնորհն վայելեալ եմ ի մանկութենէ որպէս աստ՝ նոյն եւ ի տեղիս տեղիս ի դանաղան քաղաքս եւ ի վիճակս ուստի ըստ հարազատ որդիութեանս ճանաչեմ եւ զիսկական տարտաւորութիւն միշտ ըստ կարեւորին պիտանի գտանիլ, ոչ զլանալ բնաւին ցուցանելոյ զշատ կամ ըզ-

սակաւ պողարերու թիւնս, նուիրել ի սեպհականութեանց՝ զորս շահիմ ես ի նպաստից Վիճակային եւ եկեղեցական արդեանց. ունելով յանմոռ յիշողութեան իմում՝ զորդիական պարտաւորութիւն իմ՝ ոչ զանց արարս ի զարդ Տաճարին Աստուծոյ եւ ի վայելս որդեգիր մանկանց նորակառոյց հոյակապ հանրահաշակ ձեմարանին՝ ի նորոյ կարել տալ զքսան հատ կերպասեայ ժամաշապիկս իմով ծախիւք եւ արդեամբք, զորս ներկայացուցի Գերափառ Սժելոյդ յԱստուծոյ՝ ընդ չորից գործադրեալ մախմուրեայ ժամաշապիկաց յեկեղեցեսցն Աստրախանայ՝ ի ներկայ գալըստեան իմոյ յԱթոս Սուրբ:

« Եւ հետեւաբար՝ ցանկանալով ցանկացայ այց առնել բարեհոգի ձեմարանին հիմնարկելոյ Ձեօք՝ եւ մանրաքրնին գիտողութեամբ զննեցի զներքին եւ զարտաքին բարեվայելութիւն եւ զմեծածախս տնտեսական կառավարութիւն նորին, զոր ոչ հեշտեալ կառավարի առանց պատշաճաւոր հսկողութեանց, մանաւանդ թէ՛ եւ օժանդակութեանց, վասն որոյ հրաւիրեալ ի որդիապարտն ջերմեռանդութեանց՝ նրւիրեմ զէնք հարեւր ուրբիս առ այժմ՝ եւ ուխտեմ ամենայն յօժարութեամբ ամի ամի ի մատակարարեալն ինձ յեկեղեցական արդեանց վիճակի իմում մատուցանել զէնք հարեւր ուրբիս յատկապէս նշանակելով յանուն իմ զմի որդեգիր Վեհայեփեան կոչմամբ, զորպիսի գումար շարունակեցից սկսեալ ի մէկէն Յունվարի 1876 ամի, առաքելով ի Սինօզն յերկուս նուագս ի տարին:

ի սկզբան Յունվարի՝ եւ ի սկզբան Յուլիսի անխափան՝ ցորչափ գտանիմ ի Վիճակին Աստրախանայ պարտաւորութեամբ Վիճակաւոր Առաջնորդի: »

Գեր. Գէորգ Արքեպիսկոպոս Վեհայետեանցի սոյնպիսի ջերմեռանդ եւ սրտաբուղիս զգացմունք՝ եւ բարեսիրական նուէրներն եւ ուխտն կվայելէ որ արժանաւոր գովեստիւք հրատարակուին ի գիտութիւն եւ ի մխիթարութիւն համայն ողջամիտ Հայոց, եւ ամենեցուն շնորհակալութիւնքը գրաւեն՝ ինչպէս որ Արարատ Ամազգոյս իմբագրութեանն գրաւած է, զոր եւ հրապարակաւ կ յայտնէ:

Երբ որ եւ իցէ ազգօգուտ եւ եկեղեցաշէն ջանից եւ գործոց նկատմամբ եկեղեցական եւ աշխարհական դասուց բարձրաստիճան պաշտօնեայք եւ ակաւոր անձինք համակրութեամբ ոգեւորուած կընպաստեն եւ կաջակցին՝ հասարակութիւնն անշո՛ւշտ առաւել եւս կողբելորուի եւ կնպաստէ իւր անձը անգամ՝ երբէք չխնայելով. ուստի Գէորգ Արքեպիսկոպոսի եւ նմանեացն սոյնպիսի եռանդն եւ զգացմունք ի գործ արդիւնաւորելով՝ մեծ նշանակութիւն եւ արժէք ունի:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ.

ի 19-ն ամսոյս՝ ձեռնագրութեամբ Վեհ. Հայրապետի ամենայն Հայոց Արժ. Յակոբ ձգնաւորեան, կարապետ Սերովբեան եւ Վահրամ Մանկունի Թ. Վարդապետք՝ եւ Արժ. Սուքիաս Վարդապետ

Պարզեանց՝ Եպիսկոպոսական, բարձր աստիճանին արժանացան:

Յակոբ Եպիսկոպոսն Եւզոկիոյ Վիճակին Առաջնորդ գոյով՝ նորա վերայ ձեռնադրեցաւ, իսկ երեքն՝ Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի Միաբանութենէ էին եւ այնպէս ձեռնադրեցան:

Կբարեմադթեմք ի Տեառնէ տալ նորրնձայ Եպիսկոպոսաց կարողութիւն, ղօրութիւն եւ արդիւնաւորութիւն, որպէս զի պարզերեսութեամբ եւ արժանաւոր վարուք՝ գործովք եւ արդեամբք կարող լինին իւրեանց նորրնկալ ծանր միանգամայն լսեմ աստիճանին համաձայն փայլել Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ մէջ:

Վ Ե Բ Ա Գ Ա Բ 2.

Գեր. Սարգիս Արքեպիսկոպոս Հ. Չալախեանց՝ Արցախոյ Վիճակին Առաջնորդն՝ ի 13 ն ամսոյս մեկնեցաւ աստի ի Տփլիսի երթալոյ համար, ուր առժամանակեայ պիտի մնայ իւր անձնական տկարութիւնը ըստ արժանւոյն լաւացնելոյ համար:

Ի Վ Ի Ե Ն Ա Յ Ե.

Մի մասնաւոր նամակէ՝ ցաւօք սրտի կքաղեմք հետեւեալ տեղեկութեանց պարբերութիւնքը եւ կհրատարակեմք:

«Նորերումն ազատ ժամանակին զընացինք Վիէննայի Միսիթարեան միաբանութեան այցելութիւն: Առքա ընդունում են Պապի անսխալականութիւնը:

Յիւսով էի որ մի տարի կարօտ մնալով Հայոց եկեղեցու երգեցողութեան գոնէ կաթոլիկների բերանից կսեմ այն, բայց տարաբախտաբար ժամերգութիւնը Ատիններէն էր: Թէեւ նորա խօսելիս արդարացնում էին՝ որ այդ օրը առանձնապէս հրաւիրած էր այլ քահանայ օտարազգի, բայց այստեղի Հայերը հաւատացնում են որ միշտ Ատիններէն է երգեցողութիւնը: Ուղեցայ տեսնել միաբանութեան ուսումնարանը, նորա յետ ձգեցին ուրիշ ժամանակի: Ես կերթամ դարձեալ, եւ եթէ ուշագրութեան արժանի բան կլինի՝ կգրեմ ձեզ:

«Առքա եզուիտներ են եւ շատ կրօնամոլ: Երկու տարի սորանից առաջ, երբ այստեղ մեռաւ մեր ցենզօր (գրաքննիչ) Դայթմագեանը, սորա չէին համաձայնուել թաղել նորան եւ պահանջել էին՝ որ մեռելին կնքեն առաջ եւ յետոյ կթաղեն: Հարկադրուած հրաւիրել էին թաղելու համար լուսերական քահանայ:

«Փառք Աստուծոյ՝ որ քիչ աշակերտներ ունին, — 11 հատ բոլորն: Առհասարակ տխուր եւ ցաւալի ապաւորութիւն արաւ ինձ վերայ այս յիմար կրօնամոլների գրութիւնք: Առքա ունին մի մեծ տպարան ամենայն լեզուով, որը բոլոր Աւստրիայում համարվում է առաջինը եւ տպում են գրքեր ամեն լեզուով՝ բաց ի համարեա հայերէնից, ուր բաց ի մի քանի եկեղեցական գրքերից խմորուած կաթոլիկութիւնով եւ գովասանական ճառերից առ պապն՝ ոչինչ չկայ: . . . »

Եթէ ստոյգ է Վիէննայի Մխիթարեանութեան այլ եւս Հայերէն ժամերգութեան եւս դադարիլն, մեծ ամօթ ինքեանց, եւ թող այսուհետեւ Հայութեան անունը եւս իսպառ ջնջեն իւրեանց վերայէն եւ ըստ ամենայնի պարզ Պապական կամ Վատին հրատարակվին:

Մեք կ'յուսայինք՝ որ հետզհետէ նորա կարթննան եւ կհեռանան այն վրտանգէն՝ որ նոցա առջեւ բացուած կայ եւ անհրաժեշտ ջնջումն կըսպառնայ նոցա բոլորովն օտար ձուլման մէջ:

Այս առթիւ կ'յաւելումք հետեւեալը եւս՝ զի՛ Մխիթարեան օւխտի՛ թէ ի Վիէննա եւ թէ ի Վիէնէտիկ՝ եւ նոցա ազդեցութեան շնորհիւ բոլոր Հայ-կաթովիկների կրօնամոլ եւ ազատեաց ուղղութիւնը եւ կիրքերը ի վաղուց անտի ողջամիտ անձանց յայտնի են բազմաթիւ փաստերով, եւ ահա այնպիսի ուղղութենէն յետոյ՝ մերժելով մինչեւ անգամ մայրենի լեզուն եւ ին եկեղեցւոյ մէջէն՝ նոքա դարձեալ կը յանդգնին ասել թէ՛ ինքեանք Հայոց ազգի հարազատ որդիք են, մինչդեռ եթէ արդարեւ հարազատ որդիք էին՝ պէտք է որ հարազատութեամբ Հայոց եւ մայրենի բուն սուրբ եկեղեցւոյ հետ անկեղծութեամբ միանալով՝ նախանձախնդրութեամբ պահպանեն մեր Հայոց պաշտելի նախնեաց մաքուր արիւնը, անարատ կրօնը, մայրենի լեզուն, աղգային ոգին եւ այլ բազմատեսակ նուիրական յատկութիւնքը՝ որպիսիքն ճշմարիտ եւ ողջամիտ Հայոց համար՝ արեամբ չափ յաւէտ պաշտելի եւ նախամեծարելի են:

ՅԵՅՏԵՐԵՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ՀԱՇՒԻ . . . ՆՈՐ . . . ԱՌՂԱՅ՝

(Ուշեւ ինչն ճշդրդ):

Ապրապետ Տէր Յ. Գալստանեան . . .	20
Աարապետ Յովհաննէսեան . . .	10
Մինաս Մ. Խ. Բարանեան . . .	5
Սօֆիա Չօհրաբեան . . .	50
Յովհաննէս Խաչիկ Բարան և իւր կողակից . . .	7
Ղազար Յովսէփ Բարսեղեան . . .	2
Մկրտիչ Յակովբեան . . .	4
Յովսէփ Ծատուրեան . . .	5
Այվազ Մարտիրոսեան . . .	10
Աւստրիացի Պարոն մի . . .	10
Յարութիւն Մարգարեան . . .	3
Մարիամ Գրիգորեան Առևանաց անապատի դռնապան . . .	2
Նիկողայոս Գրիգորեան և իւր կողակից . . .	2
Խանում Շահբաղեան Համագանցի . . .	5
Յովսէփեան Ղարախանեան . . .	25
Գուգուլի Յ. Արախանեան . . .	10
Սրբուհի Էմինեան . . .	10
Բարեկամ մի . . .	10
Մկրտում Գէորգեան և իւր կողակից . . .	1
Ովսաննայ Մէլլօթ . . .	2
Գէորգ Գրիգորեան . . .	10
Սարգիս Ծատուրեան . . .	2
Սանդուխտ Ուղուրեան . . .	10
Աւետիք Տէր Գաւթեան . . .	10
Յովհաննէս Աւոնդեան . . .	5
Սանդուխտ Մինասեան ի կողմանէ իւր և հանդուցեալ Խանգանն . . .	10
Սիմէօն Յովհաննէսեան և Իզաբել . . .	2
Սիմէօնեան . . .	2
Ոսկան Միրայէլեան և Մարիամ Ոսկանեան . . .	5
Խաչիսաթուն Յովհաննէսեան . . .	10
Յովակիմ Տէր Անդրեասեան . . .	1
Եղիսարէթ Ստեփաննոսեան . . .	1
Եղիսարէթ Յ. Բարսեղեան . . .	20